# *ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ–04*

*ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 02-Ը ՀՈՒՆԻՍԻ 2014Թ. ԹԻՎ 4 ՆԻՍՏԻ:*
*Նիստին մասնակցում էին համայնքի 10 ավագանիներից 7-ը՝ Ա.ՄՈՍՈՅԱՆ Ս. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ, Ա. ՄԵԼԻՔՅԱՆ, Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ, Ա. ՍՏԵՓԱՆՅԱՆ, Վ. ՄՀԵՐՅԱՆ, Վ. ՄԿՐՏՉՅԱՆ:*

## *ՕՐԱԿԱՐԳՈՒՄ*

ՀԱՐՑ - 32. «Մարտունի համայնքի բյուջեի 2014 թվականի I եռամսյակի կատարման վերաբերյալ քաղաքապետի հաշվետվությունը հաստատելու մասին» ավագանու որոշումը:

ԶԵԿ. Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՐՑ -33. «Մարտունու քաղաքապետարանում խնամակալության և հոգաբարձության հարցերով հանձնաժողով ստեղծելու և հանձնաժողովի անհատական կազմը հաստատելու համաձայնություն տալու մասին» ավագանու որոշումը:

ԶԵԿ. Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՐՑ - 34 <<<<Մարտունու մանկական գեղարվեստի դպրոց>> հիմնարկում սովորող միակողմանի ծնողազուրկ թվով 3 աշակերտներին 2014թ. ուսման վարձից ազատելու համաձայնություն տալու մասին» ավագանու որոշումը:

ԶԵԿ. Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՐՑ - 35 <<Մարտունի քաղաքի Նարեկացի փողոցի 4-րդ նրբանցք թիվ 1 հասցեի հողամասի նպատակային նշանակությունը Մարտունի քաղաքի գլխավոր հատակագծին համապատասխանեցնելու համաձայնություն տալու մասին» ավագանու որոշումը:

ԶԵԿ. Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՐՑ - 36. <<Մարտունի քաղաքի Գետափնյա 2-րդ փողոցի թիվ 9 հասցեի հողամասի նպատակային նշանակությունը Մարտունի քաղաքի գլխավոր հատակագծին համապատասխանեցնելու համաձայնություն տալու մասին» ավագանու որոշումը:

ԶԵԿ. Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՐՑ- 37. <<Մարտունի համայնքի գույքագրման փաստաթղթերում փոփոխություններ կատարելու համաձայնություն տալու մասին>> ավագանու որոշումը:

ԶԵԿ. Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՐՑ – 38. <<<<Մարտունի քաղաքի բնակիչ Գևորգ Գուրգենի Մոսոյանին ժամկետից շուտ ազատազրկման վայրից ազատելու խնդրանքով ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչության պետ Հայկ Հարությունյանին ուղերձով դիմելու մասին>> ավագանու որոշումը:

ԶԵԿ. Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՐՑ- 39. «Մարտունի համայնքի 2014թ. բյուջեում փոփոխություններ կատարելու համաձայնություն տալու մասին» ավագանու որոշումը:

ԶԵԿ. Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՐՑ – 40. «Մարտունի համայնքի սեփականություն հանդիսացող հողատարածքներից 2 լոտով 0, 1144 հա մակերեսով հողատարածք աճուրդ վաճառքի կարգով օտարելու համաձայնություն տալու մասին» ավագանու որոշումը :

ԶԵԿ. Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՐՑ – 41. «Մարտունի քաղաքի տարածքում անասուններին դեպի արոտավայր տանող փողոցների ցանկը հաստատելու համաձայնություն տալու մասին» ավագանու որոշումը :

ԶԵԿ. Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՐՑ - 42. «Դիմումների քննարկում»:

ԶԵԿ. Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

*ՈՐՈՇՈՒՄ  N 32*
<u>ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ</u>

«02»-ը ՀՈՒՆԻՍԻ 2014թ. ք. Մարտունի

«Մարտունի համայնքի բյուջեի 2014 թվականի I եռամսյակի կատարման վերաբերյալ քաղաքապետի հաշվետվությունը հաստատելու մասին» ավագանու որոշումը:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով.

*<u>ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ</u>*
*<u>ՈՐՈՇՈՒՄ Է.</u>*

Հաստատել Մարտունի համայնքի բյուջեի 2014 թվականի I եռամսյակի կատարման վերաբերյալ քաղաքապետի հաշվետվությունը (կից ներկայացվում է):

Մարտունի համայնքի ավագանին որոշեց հաստատել նիստի օրակարգը` կողմ` 7, դեմ, ձեռնպահ չկա:

Մարտունու քաղաքապետ` Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Համայնքի ավագանիներ` Ա. ՄՈՍՈՅԱՆ

Ս. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Ա.ՍՏԵՓԱՆՅԱՆ

Ա. ՄԵԼԻՔՅԱՆ

Վ. ՄՀԵՐՅԱՆ

Վ.ՄԿՐՏՉՅԱՆ

*ՈՐՈՇՈՒՄ Ν 33*
<u>ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ</u>

«02»-ը ՀՈՒՆԻՍԻ 2014թ.

ք. Մարտունի

«Մարտունու քաղաքապետարանում խնամակալության և հոգաբարձության հարցերով հանձնաժողով ստեղծելու և հանձնաժողովի անհատական կազմը հաստատելու համաձայնություն տալու մասին» ավագանու որոշումը:

Հիմք ընդունելով Մարտունու քաղաքապետի 05.02.2014թ. <<Մարտունու քաղաքապետարանում խնամակալության և հոգաբարձության հարցերով հանձնաժողով ստեղծելու մասին>> թիվ 04 որոշումը և ղեկավարվելով ՀՀ Կառավարության 24.02.2011թ. թիվ 164-Ն որոշմամբ հաստատված <<Խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրույթան>> 1-ին գլխի 3-րդ կետի պահանջներով.

*<u>ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ</u>*
*<u>ՈՐՈՇՈՒՄ Է.</u>*

Հաստատել Մարտունու քաղաքապետարանի խնամակալության և հոգաբարձության հարցերով հանձնաժողովի հետևյալ կազմը.

1. Արամ Կարապետյան - քաղաքապետի տեղակալ –նախագահ
2. Գագիկ Ոսկանյան – աշխատակազմի քարտուղար – քարտուղար
3. Նարինե Ավետիսյան –կրթության, մշակույթի, սպորտի և ընդհանուր հարցերի բաժնի գլխավոր մասնագետ – անդամ
4. Արմեն Մոսոյան – համայնքի ավագանու անդամ- անդամ
5. Կամո Ռաֆայելյան – Ոստիկանության Մարտունու բաժնի աշխատակից – անդամ
6. Վարազդատ Միերյան - համայնքի ավագանու անդամ - անդամ

Հարցը քվեարկվեց՝ կողմ՝ 7 դեմ, ձեռնպահ չկա:

Մարտունու քաղաքապետ՝ Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Համայնքի ավագանիներ՝
Ա. ՄՈՍՈՅԱՆ
Ս. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ
Ա.ՍՏԵՓԱՆՅԱՆ
Ա. ՄԵԼԻՔՅԱՆ
Վ. ՄՀԵՐՅԱՆ
Վ.ՄԿՐՏՉՅԱՆ

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ     N 34*
## ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«02»-ը ՀՈՒՆԻՍԻ 2014թ.                                                                 ք. Մարտունի

<<<<Մարտունու մանկական գեղարվեստի դպրոց>> հիմնարկում սովորող միակողմանի ծնողազուրկ թվով 3 աշակերտներին 2014թ. ուսման վարձից ազատելու համաձայնություն տալու մասին» ավագանու որոշումը:

Հիմք ընդունելով Մարտունու մանկական գեղարվեստի դպրոցի տնօրենի 10.04.2014թ. թիվ 08 գրությունը և հաշվի առնելով մանկական գեղարվեստի դպրոցում սովորող միակողմանի ծնողազուրկ երեխաների սոցիալական անապահով վիճակը.

### *ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ*
### *ՈՐՈՇՈՒՄ Է.*

Մարտունու մանկական գեղարվեստի դպրոցի միակողմանի ծնողազուրկ հետևյալ երեխաներին ազատել 2014թ. ուսման վարձից.

1. Սարգսյան Անահիտ Գոռի – ծնված 2002թ. IV դասարան,
2. Կեսոյան Վահագն Արմենի - ծնված 2002թ. II դասարան,
3. Ավետիսյան Ռուզաննա Բայանդուրի - ծնված 2000թ. II դասարան

Հարցը քվեարկվեց` կողմ` 7 դեմ, ձեռնպահ չկա:

Մարտունու քաղաքապետ`                                   Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Համայնքի ավագանիներ`                                   Ա. ՄՈՍՈՅԱՆ

Ս. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Ա.ՍՏԵՓԱՆՅԱՆ

Ա. ՄԵԼԻՔՅԱՆ

Վ. ՄՀԵՐՅԱՆ

Վ.ՄԿՐՏՉՅԱՆ

*ՈՐՈՇՈՒՄ   N 35*
<u>ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ</u>

«02»-ը ՀՈՒՆԻՍԻ 2014թ. ք. Մարտունի

<<Մարտունի քաղաքի Նարեկացի փողոցի 4-րդ նրբանցք թիվ 1 հասցեի հողամասի նպատակային նշանակությունը Մարտունի քաղաքի գլխավոր հատակագծին համապատասխանեցնելու համաձայնություն տալու մասին» ավագանու որոշումը:

Ղեկավարվելով <<Քաղաքաշինության մասին>> ՀՀ օրենքի $14^3$ հոդվածի 30-րդ կետի <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի պահանջներով և նկատի ունենալով, որ ՀՀ Կառավարության կողմից 26.01.2006թ. հաստատված <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի քաղաքային համայնքի գլխավոր հատակագիծը հաստատելու մասին>> թիվ 34-Ն որոշմամբ Նարեկացի փողոցի 4-րդ նրբանցքի թիվ 1 հասցեի հողատարածքը նշված է որպես բնակավայրերի նպատակային նշանակության, սակայն 19.01.2006թ. ՀՀ Կառավարության թիվ 135-Ն որոշմամբ և կադաստրային էլեկտրոնային քարտեզներով այն փոխանցվել է համայնքին որպես գյուղատնտեսական նպատակային նշանակության հող.

*<u>ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ</u>*
*<u>ՈՐՈՇՈՒՄ Է.</u>*

Համաձայնություն տալ, ք. Մարտունի Նարեկացի փողոց 4-րդ նրբանցք թիվ 1 հասցեի 460 քմ մակերեսով հողամասը կադաստրային էլեկտրոնային քարտեզներում փոխելու և Մարտունի քաղաքի գլխավոր հատակագծին համապատասխանեցնելու, այն է՝ գյուղատնտեսական նպատակային նշանակությունից բնակավայրերի նպատակային նշանակության հող դարձնելու:

Հարցը քվեարկվեց՝ կողմ՝ 7 դեմ, ձեռնպահ չկա:

Մարտունու քաղաքապետ՝ Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Համայնքի ավագանիներ՝
Ա. ՄՈՍՈՅԱՆ
Ա. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ
Ա.ՍՏԵՓԱՆՅԱՆ
Ա. ՄԵԼԻՔՅԱՆ
Վ. ՄՀԵՐՅԱՆ
Վ.ՄԿՐՏՉՅԱՆ

*Ո Ր Ո Շ Ո Ւ Մ   N 36*
<u>ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ</u>

«02»-ը ՀՈՒՆԻՍԻ 2014թ. ք. Մարտունի

<<Մարտունի քաղաքի Գետափնյա 2-րդ փողոցի թիվ 9 հասցեի հողամասի նպատակային նշանակությունը Մարտունի քաղաքի գլխավոր հատակագծին համապատասխանեցնելու համաձայնություն տալու մասին» ավագանու որոշումը:

Ղեկավարվելով <<Քաղաքաշինության մասին>> ՀՀ օրենքի 14³ հոդվածի 30-րդ կետի <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի պահանջներով և կատի ունենալով, որ ՀՀ Կառավարության կողմից 26.01.2006թ. հաստատված <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի քաղաքային համայնքի գլխավոր հատակագիծը հաստատելու մասին>> թիվ 34-Ն որոշմամբ Գետափնյա 2-րդ փողոցի թիվ 9 հասցեի հողատարածքը նշված է որպես բնակավայրերի նպատակային նշանակության, սակայն 19.01.2006թ. ՀՀ Կառավարության թիվ 135-Ն որոշմամբ և կադաստրային էլեկտրոնային քարտեզներով այն փոխանցվել է համայնքին որպես գյուղատնտեսական նպատակային նշանակության հող.

*<u>ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ</u>*
*<u>ՈՐՈՇՈՒՄ Է.</u>*

Համաձայնություն տալ, ք. Մարտունի Գետափնյա 2-րդ փողոց թիվ 9 հասցեի 684 քմ մակերեսով հողամասը կադաստրային էլեկտրոնային քարտեզներում փոխելու և Մարտունի քաղաքի գլխավոր հատակագծին համապատասխանեցնելու, այն է՝ գյուղատնտեսական նպատակային նշանակությունից բնակավայրերի նպատակային նշանակության հող դարձնելու:

Հարցը քվեարկվեց՝ կողմ՝ 7 դեմ, ձեռնպահ չկա:

Մարտունու քաղաքապետ՝ Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Համայնքի ավագանիներ՝ Ա. ՄՈՍՈՅԱՆ

Ս. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Ա.ՍՏԵՓԱՆՅԱՆ

Ա. ՄԵԼԻՔՅԱՆ

Վ. ՄՀԵՐՅԱՆ

Վ.ՄԿՐՏՉՅԱՆ

*ՈՐՈՇՈՒՄ N 37*
<u>ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ</u>

«02»-ը ՀՈՒՆԻՍԻ 2014թ. ք. Մարտունի

<<Մարտունի համայնքի գույքագրման փաստաթղթերում փոփոխություններ կատարելու համաձայնություն տալու մասին>> ավագանու որոշումը:

Նկատի ունենալով, որ Մարտունի համայնքի թվով 38 բնակիչներ հրաժարվել են իրենց սեփականաշնորհված գյուղատնտեսական նշանակության հողերից և այդ հողերի նկատմամբ համայնքը գրանցել է սեփականության իր իրավունքը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներով.

*<u>ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ</u>*
*<u>ՈՐՈՇՈՒՄ Է.</u>*

Հաստատել Մարտունի համայնքի գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունները և համայնքի սեփականություն հանդիսացող գույքերի ցանկը լրացնել նոր ձեռք բերված գույքերով.

1. Վարելահող- 18 միավոր- 3,353 հա
2. Այլ հողատեսք -1 միավոր -0,1հա
3. Խոտհարք – 19 միավոր – 0,969հա

Հարցը քվեարկվեց՝ կողմ՝ 7 դեմ, ձեռնպահ չկա:

Մարտունու քաղաքապետ՝ Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Համայնքի ավագանիներ՝
Ա. ՄՈՍՈՅԱՆ
Ս. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ
Ա.ՍՏԵՓԱՆՅԱՆ
Ա. ՄԵԼԻՔՅԱՆ
Վ. ՄՀԵՐՅԱՆ
Վ.ՄԿՐՏՉՅԱՆ

ՈՐՈՇՈՒՄ Ն 38
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«02»-ը ՀՈՒՆԻՍԻ 2014թ. ք. Մարտունի

<<<<Մարտունի քաղաքի բնակիչ Գնորգ Գուրգենի Մոսոյանին ժամկետից շուտ ազատազրկման վայրից ազատելու խնդրանքով ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչության պետ Հայկ Հարությունյանին ուղերձով դիմելու մասին>> ավագանու որոշումը:

Հաշվի առնելով Մարտունի քաղաքի բնակիչ Լալա Գրիշայի Ասատրյանի 30.04.2014թ. թիվ 426 դիմումը, նկատի ունենալով, որ ազատազրկման վայրում Գնորգ Գուրգենի Մոսոյանը իրեն դրսևորել է որպես կարգապահ դատապարտյալ, կրել է դատավճռով սահմանված 7 տարուց 3 տարի 9 ամիսը, խնամքին ունի հաշմանդամ երեխա, ընտանիքը ապրում է սոցիալական ծանր պայմաններում և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի պահանջներով.

ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ
ՈՐՈՇՈՒՄ Է.

Ուղերձով դիմել ՀՀ Արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության պետ Հայկ Հարությունյանին և խնդրել Մարտունի քաղաքի բնակիչ Գնորգ Գուրգենի Մոսոյանին ժամկետից շուտ ազատել ազատազրկման ձևով նշանակված պատիժը կրելուց:

Հարցը քվեարկվեց՝ կողմ՝ 7 դեմ, ձեռնպահ չկա:

Մարտունու քաղաքապետ՝ Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Համայնքի ավագանիներ՝ Ա. ՄՈՍՈՅԱՆ

Ս. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Ա.ՍՏԵՓԱՆՅԱՆ

Ա. ՄԵԼԻՔՅԱՆ

Վ. ՄՀԵՐՅԱՆ

Վ.ՄԿՐՏՉՅԱՆ

ՈՐՈՇՈՒՄ Ν 39
<u>ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ</u>

«02»-ը ՀՈՒՆԻՍԻ 2014թ. ք. Մարտունի

«Մարտունի համայնքի 2014թ. բյուջեում փոփոխություններ կատարելու համաձայնություն տալու մասին» ավագանու որոշումը:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով.

<u>ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ</u>
<u>ՈՐՈՇՈՒՄ Է.</u>

1. Մարտունի համայնքի 2014թ. բյուջեի վարչական մասի եկամուտները ավելացնել՝

ա) Պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետ բյուջեից ստացվող միջոցներ հոդվածով – 2409,6 հազ. դրամ

2. Ծախսերը ավելացնել՝
ա) Քաղաքացիական կացության ակտերի գրանցման ստորաբաժանման նախահաշվին
4111 հոդված – 2009,6 հազ. դրամ
4261 հոդված – 100,0 հազ. դրամ
4112 հոդված – 300,0 հազ. դրամ

3. Մարտունի համայնքի 2014թ. բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդի 4891 հոդվածից 100 000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ տեղափոխել ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ նախահաշվի 4819 հոդված՝ Քեսաբի հայությանը օգնելու նպատակով:

4. Մարտունի համայնքի 2014թ. բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդի 4891 հոդվածից 300 000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամ տեղափոխել <<Կրթություն>> նախահաշվի 4819 հոդված՝ 2014թ. դպրոցի շրջանավարտներին նվիրաբերելու նպատակով:

5. Մարտունի համայնքի 2014թ. բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդի 4891 հոդվածից 600 000 (վեց հարյուր հազար) ՀՀ դրամ տեղափոխել <<Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ>> նախահաշվի 4216 հոդված՝ տրանսպորտային միջոցների վարձակալության նպատակով:

6. Մարտունի համայնքի 2014թ. բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդի 4891 հոդվածից 39230 (երեսունինը հազար երկու հարյուր երեսուն ) ՀՀ դրամ տեղափոխել Մարտունու մշակույթի տան 4241 հոդված՝կաթսայատան փորձաքննության նպատակով:

7. Մարտունի համայնքի 2014թ. բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդի 4891 հոդվածից 200 000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ տեղափոխել <<Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ>> նախահաշվի 4234 հոդված՝ տեղեկատվական ծառայությունների լրացուցիչ գնում կատարելու համար:

8. Մարտունի համայնքի 2014թ. բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդի 4891 հոդվածից 200 000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ տեղափոխել<<Օրենսդիր գործադիր մարմիններ, պետական

կառավարում >> նախահաշվի 4261 հոդված նյութեր գնելու համար և 100 000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ 4252 հոդված՝ համակարգիչների վերանորոգման համար:

9. Մարտունի համայնքի 2014թ. բյուջեի ֆոնդային մասի ազատ մնացորդից 400 000 (չորս հարյուր հազար) դրամ տեղափոխել <<Գյուղատնտեսություն>> նախահաշվի 5129 հոդված՝ հանդապահի համար ձի գնելու նպատակով:

10. Մարտունի համայնքի 2014թ. բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդի 4891 հոդվածից 900 000 (ինը հարյուր հազար) ՀՀ դրամ տեղափոխել <<Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ>> նախահաշվի 4241 հոդված՝ հողերի չափագրման աշխատանքների գնում կատարելու համար և ինքնակամ շինությունների ապամոնտաժման, աղբակույտերով փակված ճանապարհների բացման աշխատանքների կատարման համար:

11. <<Ճանապարհային տրանսպորտ>> նախահաշվի 5112 հոդվածից 6700,0 հազ դրամ տեղափոխել
ա) <<Հանգիստ, մշակույթ, կրոն>> նախահաշվի (բաժին 8, խումբ 6, դաս1) 5113հոդված 4500,0 դրամ կենտրոնական այգու կապիտալ վերանորոգման համար,
բ)<<Փողոցների լուսավորում>> նախահաշվի 5112 հոդված՝ 2200,0 հազ դրամ Մարտունի քաղաքի Պողոսյան փողոցի լուսավորության ցանցի կառուցման նպատակով:

12.<<Օրենսդիր գործադիր մարմիններ, պետական կառավարում >> նախահաշվի 5113 հոդվածից 4070,0 հազ դրամ տեղափոխել <<Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ>> նախահաշվի 5112 հոդված գերեզմանոցի ճանապարհի կառուցման նպատակով:

13. Մարտունի համայնքի 2014թ. բյուջեի ֆոնդային մասի ազատ մնացորդից 300000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամ տեղափոխելՄարտունու մշակույթի տան նախահաշվի 5129 հոդված երաժշտական գործիքներ գնելու նպատակով:

14. Մարտունի համայնքի 2014թ. բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդի 4891 հոդվածից 300000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամ տեղափոխել Մարտունու մարզադպրոցի 2014 թվականի նախահաշվի 4267 հոդված՝ սպորտի բնագավառում հաջողություններ գրանցած սաներին նվերներ գնելու նպատակով:

Հարցը քվեարկվեց՝ կողմ՝ 7 դեմ, ձեռնպահ չկա:

Մարտունու քաղաքապետ՝ Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Համայնքի ավագանիներ՝
Ա. ՄՈՍՈՅԱՆ
Ս. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ
Ա.ՍՏԵՓԱՆՅԱՆ
Ա. ՄԵԼԻՔՅԱՆ
Վ. ՄՀԵՐՅԱՆ
Վ.ՄԿՐՏՉՅԱՆ

*ՈՐՈՇՈՒՄ Ν 40*
<u>ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ</u>

«02»-ը ՀՈՒՆԻՍԻ 2014թ. ք. Մարտունի

«Մարտունի համայնքի սեփականություն հանդիսացող հողատարածքներից 2 լոտով 0, 1144 հա մակերեսով հողատարածք աճուրդ վաճառքի կարգով օտարելու համաձայնություն տալու մասին» ավագանու որոշումը :

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի պահանջներով.

*<u>ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ</u>*
*<u>ՈՐՈՇՈՒՄ Է.</u>*

1. Համաձայնություն տալ, Մարտունի համայնքի սեփականություն հանդիսացող հողատարածքներից աճուրդ վաճառքի կարգով օտարել 2 (երկու) լոտով 0,1144 հա մակերեսով հողատարածք, ըստ կից ներկայացվող ցուցակի.
2. Հողի վաճառքի 1 քմ –ի մեկնարկային գին սահմանել 342 ՀՀ դրամ:

| N | հասցեն | ծածկագրերը | Նպ. նշանակ. | Գործառ. նշանակ. | մակերես քմ |
|---|---|---|---|---|---|
| 1 | Նարեկացի փ. 4-րդ նրբ. 1 | 05-003- | բնակավայրերի | ԽԿԳ | 0.0460 |
| 2 | Գետափնյա 2-րդ փող. 9 | 05-003- | բնակավայրերի | ԽԿԳ | 0.0684 |

Հարցը քվեարկվեց՝ կողմ՝ 7 դեմ, ձեռնպահ չկա:

Մարտունու քաղաքապետ՝ Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Համայնքի ավագանիներ՝ Ա. ՄՈՍՈՅԱՆ

Ա. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Ա.ՍՏԵՓԱՆՅԱՆ

Ա. ՄԵԼԻՔՅԱՆ

Վ. ՄՀԵՐՅԱՆ

Վ.ՄԿՐՏՉՅԱՆ

## *ՈՐՈՇՈՒՄ N 41*

## ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«02»-ը ՀՈՒՆԻՍԻ 2014թ.

ք. Մարտունի

«Մարտունի քաղաքի տարածքում անասուններին դեպի արոտավայր տանող փողոցների ցանկը հաստատելու համաձայնություն տալու մասին» ավագանու որոշումը :

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներով և հաշվի առնելով Մարտունի քաղաքում փողոցների և մայթերի սանիտարական պատշաճ վիճակի պահպանման անհրաժեշտությունը .

## *ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ*
## *ՈՐՈՇՈՒՄ Է.*

Հաստատել Մարտունի քաղաքի տարածքում անասուններին դեպի արոտավայրերը տանող փողոցների հետևյալ ցանկը,
ա) դեպի անտառի հատված տեղափոխումը – Գետափնյան փողոցով,
բ)դեպի <<Օստներ>>, <<Քնջներ>> տեղափոխումը – Սայաթ-Նովա և Ա. Մռավյան փողոցներով:

Հարցը քվեարկվեց՝ կողմ՝ 6 դեմ՝ 0, ձեռնպահ՝------------------------------ Վ. ՄԿՐՏՉՅԱՆ:

Մարտունու քաղաքապետ՝ Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Համայնքի ավագանիներ՝
Ա. ՄՈՍՈՅԱՆ
Ս. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ
Ա.ՍՏԵՓԱՆՅԱՆ
Ա. ՄԵԼԻՔՅԱՆ
Կ. ՄՀԵՐՅԱՆ

*ՈՐՈՇՈՒՄ Ν 42*
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«02»-ը ՀՈՒՆԻՍԻ 2014թ.

ք. Մարտունի

<<Դիմումների քննարկում>> :

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով.

*ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ*
*ՈՐՈՇՈՒՄ Է.*

Համաձայնություն տալ, Մարտունի համայնքի 2014 թվականի բյուջեի վարչական մասի <<Սոցիալական պաշտպանվածություն>> նախահաշվի 4729 հոդվածից, Մարտունի քաղաքի սոցիալապես վատ վիճակում գտնվող ներքոնշված քաղաքացիներին 620 000 (վեց հարյուր քսան հազար) ՀՀ դրամ օգնություն տրամադրելու համար:

| հ/հ | ազգանուն, անուն, հայրանուն | գումարը /դրամ/ |
|---|---|---|
| 1. | Մուշեղյան Մերի | 20000 |
| 2. | Բաղդասարյան Թամարա | 20000 |
| 3. | Սեդրակյան Քրիստինե | 20000 |
| 4. | Բդեյան Ֆենիկ | 25000 |
| 5. | Մկրտչյան Մարթա | 20000 |
| 6. | Կարապետյան Ֆրիդա | 20000 |
| 7. | Բարսեղյան Անժելա | 20000 |
| 8. | Սահակյան Մարգարիտ | 20000 |
| 9. | Բարսեղյան Կարինե Մայիսի | 20000 |
| 10. | Ավետիսյան Վեհանուշ Գուրգենի | 25000 |
| 11. | Օհանյան Լիլիթ Ավետիքի | 25000 |
| 12. | Մարգարյան Լիլիկ Ֆելիքսի | 25000 |
| 13. | Գևորգյան Արմենուհի Հենրիկի | 30000 |
| 14. | Խլոյան Տիգրան Ազատի | 30000 |
| 15. | Սարգսյան Ավետիք | 30000 |
| 16. | Կարապետյան Ռուզաննա Ժորայի | 25000 |
| 17. | Սարգսյան Սուրիա | 25000 |
| 18. | Սարգսյան Լաուրա | 25000 |
| 19. | Շահինյան Հռիփսիկ | 25000 |

| | | |
|---|---|---|
| 20. | Մարգարյան Սուսաննա Աշոտի | 25000 |
| 21. | Գևորգյան Լալա Դիմիտրիի | 25000 |
| 22. | Ղալաչյան Օֆիկ Մարգարի | 20000 |
| 23. | Մանուկյան Ժենիկ Արարատի | 20000 |
| 24. | Մոսոյան Թերեզա Սուրենի | 20000 |
| 25. | Եղոյան Ժիրայր Հակոբի | 20000 |
| 26. | Խլղաթյան Նոյեմզար Գարուշի | 20000 |
| 27. | Մոսեյան Սամվել | 20000 |
| | Ընդամենը | 620000 |

Հարցը քվեարկվեց՝ կողմ՝ 7 դեմ, ձեռնպահ չկա:

Մարտունու քաղաքապետ՝ Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Համայնքի ավագանիներ՝

Ա. ՄՈՍՈՅԱՆ

Ս. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Ա.ՍՏԵՓԱՆՅԱՆ

Ա. ՄԵԼԻՔՅԱՆ

Վ. ՄՀԵՐՅԱՆ

Վ.ՄԿՐՏՉՅԱՆ

# Տ Ե Ղ Ե Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

## ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ 2014Թ. ԲՅՈՒՋԵԻ ՄՈՒՏՔԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Առ 31-ը Մարտի 2014թ.

| ՀՀ | ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ | Տարե-կան պլան | 2014թ պլան | փաստ-ացի մուտքը | մուտք 2013թ. համապատասխան ժամանակաշրջան | Եռամսյակի կատարողական | տարեկան կատարողական % |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | Մնփական նկամուտներ | 61631.4 | 15055.6 | 17883.2 | 14355.1 | 118.7 | 29.0 |
| | Այդ թվում՝ | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 1 | Հողի հարկ | 8351.4 | 2087.9 | 1439.2 | 1271.4 | 68.9 | 17.2 |
| 2 | Գույքահարկ փոխադրամիջոցներից | 18609.5 | 4300.1 | 9774.5 | 6220.0 | 227.3 | 52.5 |
| 3. | Գույքահարկ շենք | 5256.5 | 1314.1 | 361.9 | 638.1 | 27.5 | 6.8 |
| 4 | Պետ.տուրք. ՔԿԱԳ-ի | 4000.0 | 1000.0 | 1846.0 | 1418.0 | 184.6 | 46.1 |
| 5 | Պետ տուրք նոտար | 4000.0 | 1000.0 | 961.8 | 1091.5 | 96.1 | 24.0 |
| 6 | Հողի վարձավճարներից մուտք | 5110.0 | 1277.5 | 1056.3 | 1202.1 | 82.6 | 20.6 |
| 7 | Տեղական տուրքեր | 5295.0 | 1323.8 | 1066.7 | 1154.6 | 80.5 | 20.1 |
| 8 | Տեղական վճարներ | 600.0 | 150.0 | 162.0 | 213.0 | 108.0 | 27.0 |
| 9 | Գույքի վարձակ. վարձավճարներից մուտք | 6200.0 | 1550.0 | 1128.2 | 1050.4 | 72.8 | 18.1 |
| 10 | Այլ ոչ հարկային նկամուտներ | 860.0 | 215.0 | 86.6 | 96.0 | 40.0 | 10.0 |
| 11 | Պատվիրակված լիազորության կատ. | 3349.0 | 837.2 | 0 | 704.3 | 0 | 0 |
| 12 | Դոտացիա | 191136.0 | 47784.0 | 47784.0 | 39113.2 | 100.0 | 25.0 |
| 13 | Սուբվենցիա | 3170.7 | 792.7 | 323.2 | 428.6 | 40.7 | 10.1 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ՝ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ | 255938.1 | 63632.3 | 65990.4 | 54601.2 | 103.7 | 25.8 |
| | Գույքի օտարումից | 3000.0 | 750.0 | 0 | 3892.7 | 0 | 0 |
| | հողի օտարումից | 14000.0 | 3500.0 | 1581.5 | 58493.9 | 45.1 | 11.2 |
| | Մնացորդը .առ 31.03.14թ. | 48244.4 | | 79367.2 | 84913.3 | | |
| | այդ թվում՝ վարչական բյուջե | 0 | | 32634.3 | 25389.9 | | |
| | ֆոնդային բյուջե | 48244.4 | | 46732.9 | 59523.4 | | |
| | | | | | | | |

ՄԱՐՏՈՒՆՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Բ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԳԼԽԱՎՈՐ ՖԻՆԱՆՍԻՍՏ Մ.ՆԵՐՍԻՍՅԱՆ

BJUDE NV

# ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
## ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ 2014Թ. ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

առ 31.03.2014թ.

| ՀՀ | Հոդված | Ծախսերի անվանումը ըստ տնտեսագիտական հոդվածների | 2014 թ. պլան | եռամսյա-կի պլան | փաստացի ծախս տարի | % տարեկան | % եռամսյակ |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 4111 | Աշխատողների աշխատավարձեր | 106115.5 | 26528.8 | 16067.1 | 15.1 | 60.6 |
| 2 | 4112 | Պարգևատրումներ | 3500.0 | 874.9 | 0 | 0 | 0 |
| 3 | 4211 | բանկային ծառայություններ | 300.0 | 75.0 | 50.0 | 16.7 | 66.7 |
| 4 | 4212 | Էներգետիկ ծառայություններ | 8925.0 | 2231.2 | 1681.7 | 18.8 | 75.4 |
| 5 | 4213 | Կոմունալ ծառայություններ | 22295.0 | 5573.7 | 3800.0 | 17.0 | 68.2 |
| 6 | 4214 | Կապի ծառայություններ | 3666.0 | 916.5 | 247.1 | 6.7 | 27.0 |
| 7 | 4215 | Ապահովագրական ծախսեր | 120.0 | 45.0 | 45.1 | 37.5 | 100.0 |
| 8 | 4216 | վարձակալություն | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 9 | 4221 | Ներքին գործուղումներ | 2500.0 | 624.9 | 200.6 | 8.0 | 32.0 |
| 10 | 4222 | Արտասահմանյան գործուղումներ | 2500.0 | 624.9 | 0 | 0 | 0 |
| 11 | 4232 | Համակարգչային ծառայություններ | 700.0 | 174.9 | 57.6 | 8.2 | 33.0 |
| 12 | 4234 | Տեղակատվական ծառայություններ | 1300.0 | 424.9 | 391.0 | 30.0 | 92.2 |
| 13 | 4235 | Կառավարչական ծառայություններ | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 14 | 4237 | Ներկայացուցչական ծախսեր | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 15 | 4239 | Ընդհանուրբնույթի այլ ծառայություններ | 63100.0 | 15774.9 | 7200.0 | 11.4 | 45.6 |
| 16 | 4241 | մասնագիտական ծառայություններ | 1240.0 | 309.9 | 64.5 | 5.2 | 20.8 |
| 17 | 4251 | Շենքերի ընթ.նորոգում | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 18 | 4252 | Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում | 1000.0 | 250.0 | 250.0 | 25.0 | 100.0 |
| 19 | 4261 | Գրասենյակային նյութեր և հագուստ | 1282.0 | 620.4 | 620.0 | 48.3 | 100.0 |
| 20 | 4264 | Տրանսպորտային նյութեր | 4800.0 | 1400.0 | 1340.0 | 27.9 | 95.7 |
| 21 | 4267 | Կենցաղային և հանրային սննդի նյութեր | 7210.0 | 1802.4 | 635.0 | 8.8 | 35.2 |
| 22 | 4269 | Հատուկ նպատակային նյութեր | 300.0 | 75.0 | 0 | 0 | 0 |
| 23 | 4729 | Նպաստներ բյուջեից | 5000.0 | 1249.9 | 390.0 | 7.8 | 31.2 |
| 23 | 4819 | Անդամավճար | 1800.0 | 450.0 | 0 | 0 | 0 |
| 24 | 4822 | Այլ հարկեր | 350.0 | 29.1 | 0 | 0 | 0 |
| 25 | 4823 | Պարտադիր վճարներ | 360.0 | 90.0 | 80.0 | 22.2 | 88.8 |
| 26 | 4891 | Պահուստային ֆոնդ | 16165.6 | 4041.3 | 0 | 0 | 0 |
| 27 | 5111 | Շենքերի ձեռք բերում | 1500.0 | 1500.0 | 0 | 0 | 0 |
| 27 | 5112 | Շենք շինության կառուցում | 3000.0 | 3000.0 | 0 | 0 | 0 |
| 28 | 5113 | Կապ.վերանորոգում | 11800.0 | 11800.0 | 0 | 0 | 0 |
| 29 | 5121 | Տրանսպորտային սարքավորում | 4500.0 | 4500.0 | 0 | 0 | 0 |
| 30 | 5122 | Վարչական սարքավորումներ | 1000.0 | 1000.0 | 993.0 | 99.3 | 99.3 |
| 31 | 5132 | Ոչ նյութ.հիմ.միջոց | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 32 | 5129 | Այլ սարքավորումներ | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 33 | 5134 | Նախագծային աշխատանքներ | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 34 | 5411 | Հողի գնում | 200.0 | 200.0 | 0 | 0 | 0 |
| | | | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| | | Ընդամենը՝ | 276529.1 | 86072.6 | 34112.7 | 12.4 | 39.6 |

ՄԱՐՏՈՒՆՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Բ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՖԻՆ.ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ Մ.ՆԵՐՍԻՍՅԱՆ